

## Արձանագրություն N 2-10/17

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2017 թ.-ի  
հոկտեմբերի 27-ի նիստի

Ներկա էին՝ Թորմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ.), Խաչատրյան Գ.Մ. (ֆ.մ.գ.թ.), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա. (գ.գ.թ.), Պողոսյան Ա.Ա., Ծատրյան Ա.Ա., Հակոբյան Ռ.Ս., Հակոբյան Շ.Հ., Շահբազյան Ա.Վ., Դավթյան Շ.Ա., Ավետիսյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ., Գասպարյան Ի.Ա. (ուսանող), Առուշանյան Գ.Ա. (ուսանող):

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ., դոցենտ), Հարությունյան Ռ.Մ.:

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1.«Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին տարակարգեր շնորհելու մասին» կարգում լրացումներ կատարելու մասին:

2.Հայաստան համահայկական հիմնադրամի ծրագրով երեսունյոթ խորքային հորի հորատման և ոռոգման համակարգի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման մասին:

3.Համալսարանի արտադրամասի աշխատողների պայմանագրերի երկարաձգման մասին:

**Լսեցին** 1 - Ներկայացվեց առաջարկ «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին տարակարգեր շնորհելու մասին» կարգում լրացումներ կատարելու մասին:

**Որոշեցին** 1 - Շուշիի տեխնոլոգիական համալսարանի 2016թ. նոյեմբերի 24-ի N2-11/16/2, 2017թ. հունվարի 31-ի N1-01/17/1 2017թ. օգոստոսի 31-ի N1-08/17/3, 2017թ. սեպտեմբերի 15-ի N1-09/17/1, 2017թ.-ի հոկտեմբերի 17-ի N1-10/17/1 որոշումներով հաստատված «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին տարակարգեր շնորհելու մասին» կարգում կատարել հետևյալ լրացումները.

-13<sup>'''</sup> կետից հետո ավելացնել 13<sup>'''</sup> կետը.

13<sup>'''</sup>. Սկսած 2018-2019 ուստարվանից տարակարգերը հաստատվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար մեկ անգամ՝ մինչև սեպտեմբերի 15-ը:

**Լսեցին 2-** Հայաստան համահայկական հիմնադրամի ծրագրով երեսունյոթ խորքային հորի հորատման և ոռոգման համակարգի կառուցման աշխատանքների նախագծա- նախահաշվային փաստաթղթերի մշակման մասին ներկայացրեց պրոռեկտոր՝ Պ.Գասպարյանը:

**Որոշեցին 2.1-** Հայաստան համահայկական հիմնադրամի ծրագրով երեսունյոթ խորքային հորի հորատման և ոռոգման համակարգի կառուցման աշխատանքների նախագծա- նախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

1.Գասպարյան Պավլիկ Յուրիի(ղեկավար)

2.Դավթյան Շողիկ Արտակի

3.Գարաքյան Ալբինա Վիտալիի

4.Բայունց Հարություն Վանյայի

5.Ղազարյան Պատվական Ազատի

6.Պետրոսյան Լիլիթ Ստյոպայի

7.Մանուկյան Անի Սեյրանի

8.Քելեջյան Հովհաննես Գեորգիի

9.Հարությունյան Հրաչյա Ղահրամանի

10.Մելիքյան Ռազմիկ Հայրապետի

11.Ղազարյան Վալերիկ Էդիկի

12.Ծառուկյան Խորեն Սամվելի

13.Սանոյան Վարդան Վահագնի

14.Փափախչյան Վահրամ Արմենի

15.Հակոբյան Բորիկ Մուրադի

16.Մելիքյան Գևորգ Գարեգինի

17. Շաքարյան Թամարա Արսենի

18. Խաչիկյան Նարեկ Հայկի:

**2.2-**Հաստատել վերը նշված աշխատանքային խմբի աշխատանքների կատարման քաղաքացիաիրավական և «Ազիմուտ» ՍՊ ընկերության հետ 04.10.2017թ. կնքված պայմանագրերը:

**Լսեցին 3-** Համալսարանի արտադրամասի աշխատողների պայմանագրերի երկարաձգման մասին ներկայացրեց աշխատանքային խմբի ղեկավար՝ Ռ.Հակոբյանը:

**Որոշեցին 3 -** Հաշվի առնելով Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտխորհրդի հունիսի 1-ի N1-06/17/1 որոշումը համալսարանի արտադրամասի աշխատողների պայմանագրերը երկարաձգել մինչև դեկտեմբերի 1-ը՝ պահպանելով նշված որոշմամբ հաստատված վարձատրության չափերը:

Նախագահ՝ ստորագրություն Հ.Վ.Թոքմաջյան  
Քարտուղար՝ ստորագրություն Ա.Ա.Առաքելյան

